4

Ե. ՏԱՐԻ — 1877 ԱՊՐԻԼ 4 ԵՐԿՈՒՇԱԲԹԻ — ԹԻՎ 96

ԱՊԱԳԱՅ

ՕՐԱԹԵՐԹ

ԱԶԳԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԳԻՆ 3Ը ՓԱՐ

Ապագան կը հրատարակուի ամեն օր — Տարեկանն է Պոլսոյ համար 8 քսանմոցքուղր կանխիկ. իսկ՝ գաւառաց համար ճամբու ծախքը կը պահանջուի. — Դրանուցման տարը 3 դուռաշ է. մեկէ աւելի անգամներու համար զատ ստակոսկուիւն կը լայ. — Նամակ կամ գրութիւն պէտք է ուղղել առ Մինաս Գաբրիէլեան Մեծ նոր խան միջին յարկ թիւ 31։

Ի. ՊՕԼԻՍ — ԱՊՐԻԼ 1877

ՆԱԽԱԲԱՆ

Մեր տասնեւվեց ամեայ գրական կեանքը անծանօթ չէ ընթերցասէր ազգայնոց։

Հետեւաբար հարկ չկայ մեր սկզբունքներն ու գաղափարները անգամ մ՚ալ հրատարակելու։

Մեր պաշտօնը հասարակային է, և Ազգին շահերն ու իրաւունքները միր պաշտպանութեան առարկաները պիտի ըլլան։

Այս տեսութեամբ, և կարծեաց ու տպագրական ազատութեանն օրինօք դէպքերու և իրողութեանց վրայ պիտի դարձնենք մեր ուշադրութիւնը, հարուածենք զեղծումները, գաւառական հարստահարութեանց վրայ Բ. Դրան ուշադրութիւն հրաւիրելէ չպիտի դադրինք, դատարարութեան և վարժարանաց վիճակին վրայ յաճախ պիտի խօսինք և վերջապէս՝ ի՚նչ որ Ազգին իրական շահն ու օգուտը կը պահանջէ, չպիտի դադրինք մեր ուշադրութեանն առարկայ ընելէ։

Սոյն պատեհութեամբ կը յայտարարենք թէ վստահութեան արժանի անձանց կողմանէ ուղղուած քաղաքային և ազգային դէպքերու վերաբերեալ գրութիւնները մեր կողմանէ շնորհակալութեամբ ի՚նդունուին և կը հրատարակուին։

Քաղաքական լուրերու, ինչպէս նաեւ լուրջ և հրահանգիչ յօդուածոց հրատարակութեան մասնաւոր փոյթ և ջանք պիտի նուիրենք. վերջապէս ամեն ճաշակի յարմար լրագիր մը ընելու մերովասանն պիտի աշխատինք և գոհութեամբ կը յայտարարենք թէ գիտուն և հանճարաւոր ոմանք իրենց աջակցութիւնը մեզ նուիրել յօժարած են կանխաւ։

Մեր ամեն փափաքանաց հետ կուզէինք նաեւ թիւրագնի ընել ԱՊԱԳԱՆ, եթէ ներէին տպագրութեան ծախքերը, որ տարապայման բարձրացած են։

Ուստի ակամայ տարեկանը 8 քսանմոց թուղթի և հասը 30 փարայի ընել որոշած ենք։

Եթէ լրագրոյս սպառումը մեր յուսացածէն աւելի ըլլայ, այժմէն կը խոստանանք գինը նուազեցնել, վասնզի մեր շահը անոր տարածուելուն մէջ է, և բանի մը սպառումը օ՚րչափ տարածուի, գինն ալ հարկաւ կը նուազի։

Ապագան ձեռքէ ծախսուելէ զատ կը գտնուի Դալմթիա կամուրջին գլուխը Երկանեան Ղուկաս աղայի պարագան, Բերայ ծխավանառ Կիւլէրեան Սաուիան աղայի խանութը, Պոլիս Պահճէ գափու ջրավանառ Պօղոս աղայի, Մահմուտ բաշայ պօյանի Մանուկ աղայը Խանութը գրավանառ Եփրեմ աղային մօտ և Քաչքքճի խանին դրսնը կից ծխավանառ Արծիւեան Անդրանիկ աղայի խանութը։

ԵՐԿՐԻ ՄԸ ՀԻՄՆԱԿԱՆ ԲԱՐԵԿԱՐԳՈՒԹԵԱՆՆ ՀԱՄԱՐ ՆԱԽԱԳԻՍ Ի՞ՆՉ ԲԱՆ ՊԷՏՔ Է

Երկրի մը բարեկարգութեան, հետեւապէս և յառաջադիմութեան նպաստող տարերաց գերխաւոր և կրնանք ըսել առաջին կարեւոր պէտքը կարծեաց և տպագրութեան ազատութիւնն է։

Այն ամեն երկիրներն ուր կարծեաց և տպագրութեան ազատութիւնը սեղմեալ ու կաշկանդուած է, հոն զեղծումներն արմատայեալ, պետութեան գանձը սպառած կամ սպառելու վրայ, երկրին զարգացման տարերքն եղող երկրագործութիւնն ու վաճառականութիւնը մեռեալ, հասարակաց կեանքը, ինչքն ու պատիւը մէկ խօսքով երկիրը աւերումն վիճակի ենթակայ է։

Իսկ ասոր հակառակ՝ ուր որ կարծեաց և տպագրութեան ազատութիւնն օրինօք նուիրագործեալ է, հոն երկիրը բարեկարգութեան և յառաջադիմութեան մէջ է, և ըստ ամենայնի ապահովութիւն կը տիրէ։

Հոս այս մասին հարկ կը սեպ՝ երեւելի հեղինակի մը կարծիքը յառաջ բերել, որ հարծեաց և տպագրական ազատութեան վրայ՝ պարզ, ստակ և կենդանի լեզուով ու բնական փաստերով կը խօսի։

«Գիտութեամբ ու լուսաւորութեամբ, անոր համար ալ ուժ ու հարստութեամբ անուանի ազգեր, ինչպէս Անգլիա, Գաղղիա և Ամերիկայի միացեալ նահանգներն, անանկ երկիրներ են, ու կարծեաց ու տպագրութեան ազատութիւնն ամենէն աւելի ճանչցուած ու յարգուած են. և մասնաւոր անոնց մեծագոյն մասի մէջ ազատութիւնը երկրի հիմնական օրինացը կամ ազգին Սահմանադրութեան տրամաբրութեամբ անփոփոխելի կերպով վճռուած ու հաստատուած է։

Կարծեաց ու տպագրութեան ազատութիւնն ան ազգերուն մէջ մտի, հանճարոյ, ու տաղանդներու առիւեւ անսահման ասպարէզ մը բացող, իմացականութեան գործունէութիւնը գրգռող, լուսաւորութիւնն ու քաղաքակրթութիւնը բոլոր հետեւանքներովն յառաջ տանող սկզբունքն եղած է։

Էն երկիրներուն մէջ ամեն կարծիք ու գաղափար ազատ խօսակցութեան ու քննութեան նիւթն է, այն ազատութեան կը զոհուին. բայց այն ազատութիւնը բնաւ կարծիքի մը չի զոհուիր։

Այո՛, այս ազատութիւնը երբեմն ծայրայեղ խոտորման կամ զեղծման կ՚երթայ. բայց այս աղատութեան զեղծումն ալ դարձեալ դատապարտողն ու պատժողը նոյն ազատութիւնն է։

Գիտութեան ու լուսաւորութեան բնութիւնն է, որ ամեն բան քննութեան կ՚առնէ, անկա՚ իր դարուն եկած հասած տեղը չկենար, այլ յառաջ կ՚երթայ։

Գաղափարներով ակար ու լուսաւորութեան մէջ յետնեալ երկիրներու մէջ՝ գիտութեան ամեն բան քննող բնաւորութեանը դէմ երկիւղ մը կայ։

Այնպէս կը կարծուի թէ գիտնոց խումբ մը Ատոիզային հրատակը կամ Կենսերիկոսի բանակն է, որ հնութիւններ կը տապալէ ու հաստատութիւններ կը քայքայէ։ Կը կարծուի թէ գիտութիւնը, կրօնքն ու բարոյականը, ընկերութիւնն ու իշխանութիւնը քշող տանող հեղեղ մ՚է, որուն առաջը չառնուիր, եթէ անոր ակը կամ աղբիւրը՝ դեռ առու եղած ատենը, չգոցուի։ Ասիկա թերեւս բարեսէր, բայց երկչոտ մարդերու ամենամեծ սխալմունքներուն մէկն է։

Ասիկա անանկ զգուշաւորութեան հոգի մ՚է, որուն վախճանը Սրբաքննութեան կը տանի։

Մարդկային մտքին թեւերը կտրտել է այս, որ իր գործունէութեան հաստատութեանը մէջ կարող չըլլայ խոյանալ։ Այս գրութիւնը երկար ժամանակ մարդկային ազգը տգիտութեան անմիջական հետեւանքն եղող բրռնութեան ու նուաստութեան մէջ կաշկանդեալ պահեց, մինչեւ որ Պագոնին սկզբունքը կոտրեց ան շղթաներն, ու բարոյական մարդն իր մէկ գլխաւոր իրաւանցն ալ տէր ելլալով, իր արժանապատուութիւնը ճանչցաւ։

Մոսյէալ Վոլը

ԱԶԳԱՅԻՆ

ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹԻՒՆ

Այս նիւթիս վրայ ասկէ յառաջ երկար յօդուածներ գրուեցան անոր օգուտը ցուցնելու և անոր գործադրութեան միջոցները դիւրացնելու. բայց դեռ գոհացուցիչ արդիւնք մը չունենալը ճիշդ վիճակագրութեան մը ի՛նչ դժուարին բան ըլլալը ու ո՛րչափ արդելքներու հանդիպելը կը ցուցնէ։ Եւ յայտնի աչխարհքիս մէջ դժուարութեանց յաղթելուն վրայ կը կայանայ առաքինութիւնն ու քաջութիւնը։

Վիճակագրութիւնը բովանդակ ազգերուն մէջ իւր փորձաքար մըն է. այնպէս որ ազգի մը յառաջադիմութիւնը իմանալու համար, ամենէն գլխաւոր միջոցներէն մէկն է քննել թէ այս ինչ ազգը վիճակագրութիւն ունի՞ թէ չունի։ Եթէ ազգ մը բնաւ վիճակագրութիւն չունի, վայրենի կամ բարբարոս ազգ մը կը նշանակէ, իսկ եթէ պակասաւոր ու անճիշդ վիճակագրութիւն մ'ունի, ըսել է թէ յառաջադէմ ազգաց կարգը չէ. այնպէս որ ի՛նչ աստիճանի կարգաւորեալ վիճակագրութիւն ունի ազգ մը, նոյնչափ է իւր ատոյգ յառաջադիմութեան չափը. անոր համար ալ Եւրոպայի ամենէն յառաջադէմ լուսաւորեալ ազգերը աւելի կատարեալ ու ճիշդ վիճակագրութիւն ունին։

Այս յայտնի ճշմարտութիւնը տեսնելով, երբ աչքերնիս արեւելեան տէրութեանց վրայ դարձնենք, ցաւով սրտի կը տեսնենք թէ վիճակագրութիւնը դեռ ի խանձարուրս է։ Գալով Ցաճկաստանի մասին, իւր նոր օրէնսդրութիւնն ու սահմանադրութիւնը մեծ յոյս կուտան որ ժամանակին այս պակասութիւնն ալ պիտի լեցուի։ Թուրքիոյ կառավարութեան առջեւ այս վերջին տարիներուն նոր ապագայ մը բացուեցաւ ու նոր լուսաւորութիւնք ու փոփոխութիւնք սկզբանց տեղի ունեցան ու պիտի ունենան։ Յայտնի է որ իւրաքանչիւր կրօնական ժողովրդոց յառաջադիմութիւնն ու բարեւոքումն ալ, որոնք Ցաճկաստանի մէջ իրենց հայրենիքն ունին, այն քայլով կրնան յառաջադէմ ըլլալ, որչափ որ ընդհանուր կառավարութիւնը կարգի կանոնի կը վերածի և հեւաւաբար անընդհատ վիճակագրութեան տեղ, ճիշդ և ստոյգ վիճակագրութիւն մը կը յայտնուի։ Մեր մասնաւոր նպատակն ալ Թուրքիոյ ապագային ընդհանուր յառաջադիմութիւնն ու բարեւոքումը ըլլալով, մեր կողմանէ պէտք ենք ջանալ նպաստելու այն ընդհանուր յառաջադիմական շարժման որ Թուրքիոյ հողին վրայ երեւիլ կսկսի։ Հայոց ազգը Թուրքիոյ ամէն կողմը տարածուած ու ամէն թէ տէրութեան պաշտօններու ու թէ արուեստից մէջ իր յաջողակութիւնը կը ցուցնէ, անոր համար ո՛րչափ որ Հայոց ազգը յառաջադիմէ, նոյնչափ Թուրքիոյ ընդհանուր յառաջադիմութեանը կը ծառայէ. մանաւանդ Հայաստանի և Քիւրտիստանի մէջ։

Այս ընդհանուր յառաջադիմութեան օգնելու նպատակաւ է որ մեր ազգին մէջն ալ վիճակագրութեան յատուկ խնամք մ'տանելու կը յորդորեմ։ Դառնանք ուրեմն ի մասնաւորի մեր ազգին աս կենսական խնդրոյն վրայ։

Քանի որ մեր ազգը վիճակագրութիւն չունի ու փոյթ ունենար ունենալու, անօգուտ է իւր յառաջադիմութեան համար ըրած ջանքն ու ճիգը։ Մինչեւ որ Ազգին ընդհանրութիւնը ա ճշմարտութիւնը չը մբռնէ, ոչ չի յուսայ թէ հոսատուն շայլով յառաջ կերթայ. թող չի ուսայ որ իր բարոյական և նիւթական պիտոյքը բարւոքի։

Ազգին մէջ խել մը խնդիրներ կան. որոնք թէ՛ ազգային վարչութեան ու թէ՛ երեսփոխական ժողովոյ մէջ կը յուսին. զոր օրինակ, ազգային տրոյ, կալուածոց, վանօրէից և այլն և այլն, բայց մինչեւ որ ճշդիւ վիճակագրութիւն չունենանք, անկարելի է աս խնդիրներուն գոհացուցիչ լուծում մը տալ։

Ցաճկի Հայաստանի մէջ մ'չափ Հայ բնակիչ կայ ու փ[illegible] ազգին հետ ինչպէս կը համեմուի։ Հայաստանի սահմանները դուրս, փոքր Ասիոյ և Ասորիքի մէջ որչափ Հայ կը գտնուին ու ինչո՞վ կը զբաղին. նոյն իսկ Պոլսոյ Հայ բնակչաց թիւը ճիշդ ո՞րչափ է ու ո՞րչափ պանդուխտ օտարական Հայեր կան։

Աս ամէն հարցումներուն ինչ գոհացուցիչ պատասխաններ ունինք. ո՞վ կրցեր է ասոնց թիւն ի մի հաւաքել ու ճիշդ եզրակացութիւններ հանել։ Մի՞թէ Ցաճկաստանի Հայերը երթալով ուելնալո՞ւ թէ նուազելու վրայեն, ի՞նչ պատճառներէ յառաջ լուգայ ու ի՞նչ դարման տանելու է որ նուազման առաջքն առնի։

Մեր կրթութեան աստիճանը Պոլսոյ ժողովրդէն չափելուչէ. պէտք ենք քննել թէ գաւառաց մէջ կրթութիւնը տարածուլուն ի՞նչ միջոցներու ձեռք զարելու է։ Ազգին մէջ ո՞րչափ ընկերութիւնք կան, ի՞նչ է անոնց պատակը. ի՞նչու կրսկսին ու քանի մը տարի տաքը կը դադրին։

Եթէ ասոնց նման հարցումները շարունակելու ըլլանք, հաշարներով հարցումներ շարելու ենք որ քանի մը յօդուածի մէջչենք կրնար ամփոփել։ Համոզուած ըլլալով որ վիճակագրութիւնը մեր ազգին ապագայ բարեւոքմանը մեծապէս պիտի օգնէ, որն որ մեր լրագրոյն միակ նպատակն է, ուրիշ անգամ աս նիւթիս վրայ նորէն պիտի խօսիմ ու դանազան միջոցներ առաջարկելու միտք ունիմ, որպէսզի աս խնդիրը վառ պահուի, չիմոռցուի, գաւառաց մէջ աս խնդիրը տարածուի ու իւրաքանչիւր ընտանիք ասոր օգտակարութեանը թափանցելով ըստ կարի օգնեն աս խնդրոյն լուծմանը։

Վերջտանք խօսքերնուս, խնդրելով Պոլսոյ քաղաքական ու կրօնական ժողովներէն և ազգին ընդհանուր կառավարութեան դեկը իրենց ձեռքն ունեցող բարձրաստիճան անձինքներէն, որ աս կենսական խնդրոյն յատուկ մը տարբերութիւն չնորհեն ու դորձադրութեան միջոցները դիւրացնեն, ազգին առաջադէմ յառաջադիմութեանը համար։

Հ. Կ. Ս.

Հետեւեալը, որ Ամերիկայի Վսեմ. դեսպանին անցեալներն Սամաթիոյ Ս Սահակեան վարժարանն այցելութիւն ըրած առեն ուշակերտաց խօսած է, ուշադրութեան արժանի ըլլալուն համար կը փութանք բառ առ բառ հրատարակել։

«Կը ցաւիմ որ չեմ կրնար միտքս բացատրել ձեզ ձեր լեզուավը, ինչպէս որ դուք բացատրեցիք զանի իմ լեզուովս. Հայ լեզուն, ինչպէս իր տառերն ու գիրերը, կնքեալ են ինձ համար։»

«Գիտութիւնը ամենուրեք նոյն է թէ մեզ Երկրին մէջ և թէ այս տեղ, միայն թէ մենք Անգլիերէն լեզուով կը սորուինք և դուք այս տեղ Հայերէն»։

«Գիտութիւնն է ազգի մը և ժողովուրդի մը յառաջադիմութեան միջոցը կամ երաշխաւորողը, ինչպէս որ մեր երկիրն ալ իր յառաջադիմութիւնը գիտութեան կը պարտի»։

«Կը տեսնեմ որ դուք ալ մեր երկրին պէս հոս խմբեալ գիտութիւն ձեռք բերելու կը ճգնիք, և այսօր ձեր ըրած յառաջադիմութիւնը, որ իմ ըրածս այցելութեամբս կրցի տեսնել, թէ ձեզ և թէ ձեզ համար աշխատող ուսուցչաց պատիւ կը բերէ»։

Վսեմ. դեսպանին այն խօսքերն հրատարակելնուս առթիւ հարկ կը համարինք ըսել թէ գիտութեան կարեւորութեանը վրայ առանձին յօդուածով մը խօսելով, պիտի ցուցնենք թէ մեր վարժարաններն Ազգին ակնկալութեանն ու ժամանակիս ոգւոյն ու պահանջմանցը համապատասխանող վիճակի մը վերածելու համար ինչ միջոց և թէ ուսմանց ինչ դասակարգութիւն մացնել հարկ է, որպէս զի Ազգն ստոյգ ապագայի մը առաջնորդուի և փոխանակ խմաստակներ ունենալու, գիտուն և ուսեալ անդամներ ունենայ և նիւթապէս ու բարոյապէս միանգամայն օգտի։

Վստահութեամբ կ'ը[illegible] լրագրի մը պարտքն է այս [illegible] սոնց նման չահեկան իրաց [illegible] հրաւիրել Ազգ. վարչութեա[illegible] հասարակաց ուշադրութ[illegible] փոխանակ կուսակցական [illegible] խնդիրներ յարուցանելու, որ թանկագին ժամանակն սպառ[illegible] և կիրքերն վայրապար գրգռել[illegible] զատ՝ ուրիշ բանի չեն ծառայեր[illegible]

Ըսել չենք ուզեր թէ կուսակցութիւններ ըլլալու չեն, ընդհակառակն՝ կը փափաքինք [illegible] սկզբան կուսակցութիւններ ծը[illegible] նունդ առնուն մեր մէջ, որպէս զի Ազգին շահերն ու իրաւունքները ապահովին. իսկ կրից կուսակցութիւններէ օգէ փախչելու[illegible] չափ խորշելու է։

Մեր արժանայարգ բարեկամ ժամակոչեան Մեծ. Պողոս Էֆէնդի հետեւեալ գիրը ղրկած է Եկեղեցական-գափուի ընարողական ժողովոյ

Արժանապատիւ Հայր

Քաղցր է ինձ այդ կոչումը յորմէ կոչեն զիս ազնիւ Եկեղեցի գափուցիք և այն վստահութիւնը՝ զոր ունին առիս, առաւել եւս քաջալերեն զիս ինձ յանձնուած աւանդը անաղարտ պահելու։

Մինչ ակն ունիմ որ Հայր Թաղէն Ազգ. Երեսփոխան ընարուէր, որուն բնիկ թաղեցին եմ, զլացան և զիս ուրացան քանիցս։ և ահա՝ ազնիւ Եկեղեցի գափուցիք չեն վարանիր անոնց սխալանքն ուղղելու։

Խնդրեմ, Արժանապատիւ Հայր որ զիս ընարողներուն իմ կրկին շնորհակալիքս մատուցանէք, և յայտնէք թէ իմ սկզբունքներս նոյն են, ինչ որ էին ասկէ յառաջ։

Հաճեցէք ընդունիլ իմ յարգանքս. որով մնամ Արժ. Հայրութեանդ խոնարհ ծառայ.

1877 Մարտ 30

ՊՕՂՈՍ Հ. ԺԱՄԱԿՈՉԵԱՆ

ԱՐՏԱՔԻՆ

Ապրիլ 5 թուով Լոնտրայէն հետեւեալը կը գրեն։

«Երեկ երեկոյ Պ. Ուառ Հօնթ ծովապետ լորտը և Սրը Հիքսը-Պաչ Իրլանտայի իշխանը, մէկ մէկ ատենաբանութիւններ ըրին։ մին Բէթէրսպուրգի պահապան խրմբին մէջ ճաշի ատեն և միւսը կլօսէսթէռի մէջ, ուր այս վերջինին ատեններս Անգլիոյ խաղաղութիւնը դերին վրայ խնդիր եղաւ։ Այս բանակցութեանց մէջ երկու իշխաններն համաձայն գտնուեցան հաստատելու համար թէ Անգլիա արդի կառավարութեան ներքև, արեւելեան խնդրոյն մէջ Եւրոպայի դիւանագիտաց էն կարեւոր դիրքերէն մէկը բռնեց։

Անգլիա այլ ևս այն տերու-

...ունը չէ որուն՝ երեք մեծ զին-
...ական տերութիւնները Պեռ-
...էն յիշատակագիր մը ղրկեցին
պէտք պիտի ըլլար ընդունել
...նց իսկ անոր խորհուրդ հար-
...ու դժուարութիւնը կրելու։
Հիքս—Պաշ մի քանի ազա-
...սկանաց կողմանէ առաջար-
...ուած միջամտութեան քաղա-
քականութիւնը քննելով, անոր
վտանգաւոր արդիւնքներ յառաջ
բերելը փաստով ցոյց տուաւ,
զորս չեն մոռացեր այս առաջար-
կութեան հեղինակները. զին-
եալ միջամտութեան մը ոչ միայն
ազգաց և կրօնի պատերազմի մը
ծագման առիթ կրնայ տալ, այլ
և աղետալի պատերազմի մ'իսկ։
Ցարգելի Պարոնը կը կարծէ
թէ երբ պաշնագիրը ամբողջա-
պէս մեկնուի, երկրին կատար-
եալ հաւանութեանը պիտի ար-
ժանանայ։ Նաեւ մեծ կարեւո-
րութիւն մը պիտի ստանար պաշ-
նագրոյն ստորագրութիւնը, որ
երեք տէրութեանց ակնկալու-
թեանցը մեկ նոր փորձն է այն-
պիտի խնդրոյ մը մէջ, որ վտան-
գալի պիտի ըլլար, եթէ նորա
որոշումը մեկ տէրութեան կա-
մացը միայն թողուեր։
Դաշնագիրը խաղաղութիւնը
պահպանելու առհաւատչեայ մ'է,
և այս խաղաղութեան կարեւո-
րութիւնը ոչ միայն Թուրքիոյ կոզ-
մէն բարենորոգմանց ընդունե-
լութիւն գտնելը յուսալի կընէ,
այլ և անոնց գործադրութիւնը։

—

Կազէթ տը Լ'ալեմանեթ տիւ
Նորտ լրագիրը հետեւեալը կը ծա-
նուցանէ.
«Անգղիա և Իտալիա դաշ-
նագիրը ստորագրած առենին
ձեռք առած դիրքորոշութիւնին
մեծ ազդեցութիւն յառաջ պիտի
բերէ Դրան կացութեանը վրայ։
Նաեւ մեր դիւանագիտական ա-
կումբներուն մէջ այս յիշատակա-
գրին նուազ կարեւորութիւն կ'ընդ-
ծայեն, քան թէ Բէուճ բաշայի
Ս. Բէթրսպուրկի մէջ ստանձնած
պաշտօնին, որ անշուշտ ի ներ-
կայութիւն կը գնէ զՌուսիա և
Թուրքիա»։

—

Լոնտրայի Օսմանեան պես-
պան Միւզիւրիս բաշա հռչակա-
ւոր դաշնագրին նկատմամբ Բ.
Դրան պաշտօնական պատասխանը
Լորտ Տէրպիի մատուցանելով,
յայտարարեր է թէ Բ. Դուռը
լաւագոյն կը համարի պատերազ-
մել, քան թէ դաշնագիրն ընդ-
ունելով իւր անկախութիւնը
վտանգի ենթակայ տեսնել։
— Ռուսիոյ կայսրը ամսոյս
24ին Քիշնէվ կ'սպասուի, ուր
զինուորական կրթութեանց ներ-
կայ պիտի գտնուի։
— Ապրիլ 14ին Բարլզի Ռու-
սական դեսպան Օրլօֆ իշխանը
Անգղիոյ գահաժառանգ իշխա-
նին և Գաղղիոյ արտաքին գոր-
ծոց նախարարին հետ բանակ-
ցեր է։
— Տալմացիոյ կառավարիչ Գ.
Ռատովիչ Վիէնա գացեր է։

ՀԵՌԱԳՐԱՅՈՒՐՔ

(Ամենայն Հայոց)

Բարիզ 13 ապրիլ

Կը հաւատան թէ Օրլօֆ իշ-
խանը յայտարարած ըլլայ, որ
Ռուսիա նոր բանակցութեանց
պիտի ղիջանի եղեր։

Ս. Բէդէրսպուրկ 13 ապրիլ

Ռուս լիագրաց լեզուն խիստ
գրգռիչէ։

Բարիզ 13 ապրիլ

Ժուրնալ տէ Տէպա լրագիրը
կորչագոֆ իշխանին Թուրքիոյ
ներքին գործոցը միջամտելու մա-
սին ունեցած ընթացքը քննա-
դատելով, կը յարէ թէ՝ երբ տէ-
րութիւնք ազդարարութիւններ
ուղղեցին Նաբոլիի թագաւորին՝
ազատականաց դէմի գործ դը-
րած աքսորանաց, հալածմանց
և դանակոծութեանց պատճա-
ռաւ։ միայն Ռուսիա սոյն միջա-
մտութեան դէմ բողոքող գըտ-
նըուեցաւ։

Ասկէ զատ՝ կը յիշէ նոյն լրա-
գիրը թէ կորչագով իշխանին 1856ի
շրջաբերականը կ'ըսէր թէ Նա-
բոլիի թագաւորը իւր վերապե-
տական անբռնաբարելի իրաւ-
ունքներն ի գործ կը գնէ և թէ
անոր երկիրներուն ներքին գոր-
ծոց միջամտելը, հզօրին՝ տկարին
իրաւունքը բռնաբարել է։ Կը
յաւելուր նաեւ թէ վերապետք
իրենց մէջ հաւասար են։

Ժուրնալ տէ Տէպա կորչա-
գով իշխանին արդի հակասու-
թիւններն կը ցուցնէ։

Պերլին 13 ապրիլ

Երեսփոխանական ժողովն այ-
սօր Գ. Գիզմարքի հրաժարական
նամակին վրայ վիճաբանելով,
պետութեան քարտուղարը՝ Գ.
Գիլլու, յայտարարեց թէ Գ.
Գիզմարքի հրաժարումը պետու-
թեան դիւանագրին լիակա-
տար պատասխանատուութեանը
որ և է փոփոխութիւն մը յառաջ
բերած չէ։

Գուքրէշ 13 ապրիլ

Այս երեկոյ նախարարաց մեծ
ժողով մը զինուորներն դրօշի ներ-
քև կոչելու որոշումը բրաւ և Ռու-
մանական պատերազմի մը միջո-
ցին բռնելիք ընթացիցը վրայ
վիճաբանեց։

Ունկրենի կայարանին ընդհա-
նուր քօմիսէռի պաշտօն վարող
Ռուս պաշտօնատար մը այս վայր-
կենիս Գուքրէշ կը գտնուի, ուր
կառավարութեան անդամոց այ-
ցելութիւններ կընէ։

Կը կարծուի թէ յիշեալ պաշ-
տօնեայն զօրաբանակաց անցնե-
լու պայմանները կարգաւորելու
կզբաղի, որոց յառաջապահը կա-
ռախումբ մտնելու վրայ կը գըտ-
նուի։

Աւստրիոյ սահմանագլխին
զանազան մասերէն հասած լու-
րերը ոչ է զինուորական շարժում
չեն ծանուցաներ։

Ասկէ կը հետեւցնեն թէ Ա-
ւրբարիա, պատերազմի միջոցին,
Ռուսիոյ նպաստաւոր չեզոք դիրք
մը պիտի բռնէ։

Լոնտրա 13 ապրիլ

Լորտերու խորհրդարանին մէջ
Տէրպի կոմսը ցաւ յայտնեց, իբր
այն թէ Թուրքիոյ պատասխանը
խաղաղական արդիւնք մը յա-
ռաջ բերելու եղանակաւ պատ-
րաստուած չէ։

Լորտ Կրանվիլ ծանոյց թէ
երկուշաբթի օրուան նստին մէջ
զայն պիտի քննադատէ։

Լոնտրա 13 ապրիլ

Հասարակաց խորհրդարանին
մէջ Սըր Օթոֆոր Նորթքոթ
ստեց Նոր լրագրին այն լուրը,
որ իբր թէ Լորտ Տէրպի Կ. Պո-
լիս նամակ մը ղրկելով, ծանու-
ցած ըլլայ թէ՝ Թուրքիա պէտք
չէ ոչ այլ և Անգղիոյ վստահի։
Հարթինկթըն մարքիզը կա-
ռավարութեան քաղաքականու-
թեանը դէմ յարձակելով, արդի
կացութեան պատասխանատու
ցոյց տուաւ։

(Ա. Ֆրանս Պրեսէ).

Բարիզ 12 ապրիլ

Թուրքիոյ և Գարատաղի մէջ
զինադադարի երկարաձգման մը
տարաձայնութիւնը Գուլվառին
վրայ տագնապ յառաջ բերաւ։

Բարիզ 14 ապրիլ

Լորտ Տէրպիի այն յայտարա-
րութիւնը՝ որ դաշնագրին նկատ-
մամբ Թուրքիոյ տուած պատաս-
խանը երկիւղալի կը նկատէ,
Գուլվառին վրայ մեծ սարսափ
ազդեց։

Լոնտրա 12 ապրիլ

Թուրքիոյ դեսպանը իւր կա-
ռաւարութեան՝ դաշնագրին նը-
կատմամբ տուած պատասխանը
Ֆոռէյն Օֆիսի ներկայացուց։

Լրագիրք տակաւին կը յու-
սան թէ Ռուսիոյ նկատմամբ
ձեռք առնուած դիւանագիտա-
կան միջոցները գոհացուցիչ ար-
դիւնք մը յառաջ պիտի բերեն.
ասոնք միշտ կը խրատեն զՌու-
սիա որպէս զի ծայրայեղ միջոց-
ներու չդիմէ։

Լոնտրա 13 ապրիլ

Լրևելեան խնդրոյն մէջ շահ
ունեցող տերութիւն մը զէնքնկե-
ցութեան վերաբերող Ռուսիոյ և
Թուրքիոյ արամագրութիւնները
—գլի առնելու առաջարկու-
թիւն ըրաւ Ֆոռէյն Օֆիսի։

Սիկերկրականի ջուրերը գըտ-
նուող Ամերիկեան նաւախմբին Կ.
Պոլիս երթալու հրաման եղաւ
Ամերիկայի շահերը պաշտպանե-
լու համար։

Ռուսիոյ բռնած ընթացից նը-
պատակին վրայ ճշդիւ դատողու-
թիւն մ'ընելն դժուարին է։

Ռակուզա 14 ապրիլ

Արևելքի վիճակը ընդհանրա-
պէս սպառնալից կը նկատուի։

Պերլին 13 ապրիլ

Խորհրդարանը Գ. Գիզմարքի
հրաժարման խնդրոյն վրայ վի-
ճաբանեցաւ։

Ս. Բէթրսպուրկ 14 ապրիլ

Բոլոր բանակներն շարժման
մէջ դրուելու հրաման եղաւ։

ՆԵՐՔԻՆ

Շաբաթ օր Բարձր. Մեծ—
եպարքոսն ու Շէխիսլամը կայ-
սերական պալատը երթալով եր-
կար ատեն Ն. Վեհափառութեան
հետ խորհրդակցեր են։

— Զինուորական գործոց նա-
խարարն այս օրերս կարին եր-
թալով, տեղւոյն ամրութեանց և
զինուորական վիճակն աչքէ պիտի
անցնէ եղեր։

— Շաբաթ օր Օէրտարը էֆ-
ենտի Ապտիւլ Քէրիմ բաշա՝ կայ-
սեր Թիկնապահներէն մին իւր
հետն ունենալով, Իզմիտին շո-
գենաւով վառնա գացեր է։

—Այսօր Օսմանեան երեսփո-
խանական ժողովը ներքին կանո-
նագրութեան առաջինքն մատուցը-
ուած խնդրագրովք պիտի զբաղի։
Իսկ վաղն ալ թաղապետական
կանոնագրութեանց վրայ պիտի
վիճաբանի։

— 54 և 71ի փոխառութեանց
կէս տոկոսներն ամսոյս 10ին պիտի
վճարուին եղեր Տէնթ և Բալմէր
անուն դրամատանց միջոցաւ։

— Գարատաղի նուիրակներն
իրենց երկիրը դառնալու համար
այսօր Մայրաքաղաքէս պիտի
մեկնին։

—Եգիպտոսէն Մայրաքաղաքս
գալու համար 5 վաշտ զօրք ճամ-
բայ ելած է այսօր։

— Տէրութեան պաշտօնաւոր
և անպաշտօն նախարարներէ բաղ-
կացեալ ընդհանուր ժողով մը
պիտի կազմուի այսօր Վեհ. Սուլ-
թանին նախագահութեանը ներ-
քեւ։

— Եւրոպայի պօրսաներուն
մէջ դրամական տագնապը դեռ
կը շարունակէ։

ԴՐԱՄԱԿԱՆ

Ղալաթիայ, ապրիլ 4

Լսհամը ումումի բաց.	10–36
» գոց.	11–
Փոխառութիւն 63 ի	
» 65 ի	
» 69 ի	
» 72 ի	
» 73 ի	
Ռում. երկթ. ֆր.	25–
Բէքօր	1–20
Հէվալէսիզ	

ԸՆԹԱՑՔ ԴՐԱՄՈՑ

Օսմ. ոսկի 100 ղրշ. էն	
Անգղ. ոսկի	109–35
Գաղ. ոսկի	87–30
Բօլ	89–10
Գրբրմից	51–12
Ճերմակ մէճիտ տարբ.	4–25
Մէթալիք »	13–30
Պղինձ »	69–
Հինգնոց »	14–
Թղթադրամ դարպոն	

ԹՂԹԱԴՐԱՄ

Բարձր	
Ցած	
Պղնձի հաշուով	163–20

ԾԱՆՈՒՑՄՈՒՆՔ

—

ՏՕՔԹՕՐ ՄԱՐՔԷՐ

Վիէննա մէքթէպլէրինտէն օն պէշ սէնէ մուգաատէմ տիբլօմա ալմիշ վէ պիր չօղ էվրօբա խասթախանէլէրտէ բրօվա իթմիշ օլան Տօքթօր Մարքէր՝ պու տէֆա Պէշիքթաշտա Բաշա մահալլէսինտէ Բում քիլիսէսի դարշըսընտա 4 նիւմէրօլու քէնտի խանէսինտէ հէր կիւն սաաթ 3–5 է բազարտան մաատա ֆագիր խասթալարա մէճճանէն պագաճադ տըր։

Տօքթօրը միւմայիլէյհ հէր կիւն գաշլաթատա վօյվօտա սօգաղընտա Բօլօնէզ էճզախանէսինտէ սաաթ 7–9ա գատար պուլունուպ հէր նէվի խասթալարա պագաճադ տըր։

Պունտան մաատա վագըթլարտա պալէատէ զիքր օլունան խանէսինտէ պուլունուր։

Միւմայիլէյհ տօքթօր, ճէրահլըգ վէ էպէլիք վէ բահիմ իւֆիւնէթի, գանլը վէ գուրու պասուր, սըթմա, կէօյիւս, տէրի խասթալըղը։ Ֆրէնկի վէ օնտան դալմա գուլագ, պուրուն կէօզ վէ բահիմ վէ եէլլէրի նէ գատար էոկի օլսա բէհրիզսիզ ադ վագըթ ղարֆընտա տէֆի իտէճէք, վէ պէլ սօուգլուգ եէնի վէ էսկի քէնտի ալէաթընտա օն տէֆատա տէֆի իտէճէք յինի իլան իյլէր։

—

ՄԻՆԱՍ ՉԷՐԱՉ

ԱԶԳԱՅԻՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԻՒՆ

ՎԱՐԺԱՊԵՏԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ ՄԷՋ

ԽՕՍՈՒԱԾ ՃԱՌԵՐ

Տպագրութիւն Արամեան

Զօնէն, վսեմ. Օտեան էֆէնտիի առ հեղինակն ուղղած նամակէն և ընտրողական քերականութենէ մը զատ կը պարունակէ ընդարձակ յառաջաբան մը և վերջաբան մը, վարժապետական ժողովի պատմութիւնը և հեղինակին հոն խօսած ճառերը կրթական այլևայլ խնդրոց նկատմամբ։ Այս ճառերէն մին, 120 էջէ բաղկացած, դրաբառի դէմ աշխարհաբառը կը պաշտպանէ անթիւ վկայութիւններով։ Լեզուն բարեփոխուած է։

Դաստիարակութիւնը մեր ազգի առաջին խնդիրն ըլլալով, տարակոյս չը կայ թէ ժողովուրդը պիտի փութայ լսել դիտող դաստիարակի մը գաղափարները։

Կը ծախսուի Ս. Ղ. և Եաղմաճեան գրատունը և ուրիշ գրավաճառաց քով, գին 13 ղրշ։

—

ՊՕՍԻԻԷԻ

ՅԱՂԱԳՍ ԾԱՆՕԹՈՒԹԵԱՆ

ԱՍՏՈՒԾՈՅ ԵՒ ԱՆՁԻՆ

ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆ

ԱՌԱՔԵԼ Ա. ՇԱՐԱՊԽԱՆԵԱՆ

ԱՇԱԿԵՐՏ

Ս. Ղեւոնդեանց Վարժարան

ՅԱՐՄԱՇ

Սոյն գիրքը Պօսիւէ Գաղղացի հռչակաւոր արքեպիսկոպոսին իմաստասիրական գործն է, որ հինգ ընդարձակ գլուխներով, կուսուցանէ մարդուս կազմուածքը, հոգւոյն կարողութիւնները, երկուքին՝ հոգւոյ և մարմնոյ իրարու հետ ունեցած կապակցութիւնը և իրարու վրայ տիրելու կերպը և վերջապէս մարդս անասուններէն տարբերող ճիշդ յատկութիւնները։

Թէ գործն ըստ ինքեան կատոնական և անսխալ է յիմաստասիրութեան, դի մինչև ցարդ Դաղղիոյ երևելի վարժարանաց մէջ իմաստասիրութեան պարտադրուած աշակերտներուն իբրև հեղինակութիւն սերտել կը տրուի։ Թէ թարգմանութիւնը հասկնալա անուշ Հայերէնով մ՚եղած է։ Արժանի գործ մ՚է կարդալու՝ և չատ անգամ կարդալու մանաւանդ դպրոցներու համար։

Կը ծախսուի Գավաֆեան գրատունը և այլ և այլ գրավաճառներու քով։

Գին 2 ֆրանք

—

ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹԻՒՆ

ԽՄԲԱԳՐԵԱԼ

Բարիզի բժշկական ակադեմիային ծրագրին համեմատ

ԸՆԴԱՆՈՒԱԾ

Երկրորդական և վարժապետական դպրոցներու մէջ

ՀԵՂԻՆԱԿ

ՎԻԲԹՈՐ ԺՈՐԺ

Բժիշկ և վարժապետ քնական պիտոյեանց, անդամ այլ և այլ գիտնական ընկերութեանց

Լայն, Լայն։

ԹԱՐԳՄԱՆԵՑ

Ս. ԷԹՄԷԲՃԵԱՆ

192 միջակ ութածալ երեսներէ բաղկացեալ համառօտ բայց ամփոփ գիրք մ՚է այս, որ ամեն կարդի և հասակի մարդոց հասկանալի է իւր պարզութեամբը և յատկութեամբը։

Կը վաճառուի ամեն գրավաճառաց քով։ Գինն է մէկ քառորդ մէճիտիէ։

Դպրոցներու համար հարիւրին 10 ղրշ կ՚ըլլայ։

ԳԱՌԵԳԻՆ

ՄԵԼԻՔԵԱՆ ԷՖԷՆԴԻ

ՎԿԱՅԵԱԼ ԻՐԱՒԱԲԱՆ

Մեծ Նոր խան վերի յարկ թիւ 39

Պատրաստ է ամեն տեսակ դասերու փոխանորդութիւն ընել՝ գոհացուցիչ պայմաններով։

—

ԳՈՐԾԱՐԱՆ

ՊԱՏԿԵՐՀԱՆՈՒԹԵԱՆ

ԵՒ

ԳԾԱԳՐՈՒԹԵԱՆ

ՏԵԼԵՄԱՔ Մ. ԷՆԳՍԷՐՃԵԱՆԻ

Ուսեալ ի Փարիզ

ԻՎԱՐԺԱՐԱՆ ԴԵՂԱՐՈՒԵՍՏԻՑ

Բերայ։ Էյրի–սօգադ թիւ 16 Թագսիմի աղբիւրին քովի նոր բացուած փողոցի ուղղութեան մէջ, կամ աւելի դիւրութեան համար, պէտք է դիմել Թարլա–Պաշի ճատտէսի թիւ 47, թիւթիւնճիւ Նազարէթ աղայի խանութը և անկէց տեղեկանալ։

Սոյն գործարանին մէջ կ՚աւանդուին պատկերհանութեան (բէնթիւռ) և գծագրութեան (տէսէն) ամեն ճիւղերը։

Պատկերհանութեան ճիւղին մէջ կ՚աւանդուին նախ մէկ կամ երկու գոյնով (օքռէյօն նուառ) կամ (օ տէօ քռէյօն), դիմագծութեան (ֆիկիւռ), տեսարանագծութեան (բէյզաժ) և ծաղկագծութեան օրինակութիւններ, քարէ արձաններէ օրինակութիւն, օրինակութիւն ըստ բնութեան (տ՚ապռէ նաթիւռ), իւզաներկ դունաւոր պատկերներէ օրինակութիւն մէկ կամ երկու գոյնով, օրինակութիւն իւզաներկ ընտիր պատկերներէ ամեն գոյնով, օրինակութիւն կենդանի բնութեան (նաթիւռ վիվանթ) նախ մէկ կամ երկու գոյնով և ապա ամեն գոյնով, կրթութիւն շարժմանց կենդանի բնութենէ (մուվմանտ՚ապռէ նաթիւռ) և բաղադրութիւն (քօնբօզիսիօն) ամեն գոյնով, ընդօրինակութիւն օրինական (բէռսբէքթիվ)։ Խնդրողաց մանրանկար (մինեաթիւռ) ալ կ՚աւանդուի փղոսկրի վրայ, նմանապէս բռոնզէ և ջրաներկ (աքուառէլ)։

Վերոյգրեալները աւանդուած միջոցին ի պահանջել հարկին մարդակազմական, երկրաչափական և զանազան գիտութիւններէ ծանօթութիւններ ալ կը տրուին, որոնք խիստ կարեւորութիւն ունին պատկերհանութեան մէջ։

Գծագրութեան ճիւղին մէջ պիտի աւանդուին նախ գործնական երկրաչափական ձեւերու գիտութիւնը և կրթութիւնը, յետոյ կրթութեան՝ զարդանկարի օրինակութեանց, մատիտով և թանաքով (անքռը տէ Չին), ալաղիզ և կոր գծերով բաղադրութիւն (գօնպինէզօն տէլինէօ ալ ռուսթ է տէ սիռգօնֆէռանս) ջրաներկով լաւ։ Այս դասին մէջն է ամեն արհեստի մէջ գործածուած կանոնաւոր ձեւերուն ուսումը. ճարտարապետական գծերու դիտութիւնը և կրթութիւնը, ճարտարապետական չորս հիմնական օրէնքները, մատիտով և չինի մելանով և կրթութիւն զարդագծութեան՝ մելանով, չափագիտական լուսոյ և ստուերի օրէնքներուն գիտութիւնն և կրթութիւնը ջրաներկով լաւ, և ընդօրինակութիւն գծական (բէռսբէքթիվ լինէռ)։

Վերոյգրեալները կ՚աւանդուին սոյն գործարանին մէջ մինչև մէկ աշակերտ ալ ըլլայ։

Մուտքին պայմաններուն համար պէտք է որ գործարանատէրը Մ. Տելեմաք էֆէնտին տեսնել որ կը գտնուի առ այժմ իւր գործարանը Բշ. մինչեւ ժամը 5 Դշ. ամբողջ օրը, Ուր. և կիր. մինչեւ 5։

Գործարան այն տանը մէջն է ուր կը բնակի Մ. Տելեմաք էֆէնտին իւր ընտանեօքը. ուսանողուհիներ ալ կ՚ընդունուին պէտք եղած պայմաններով։

—

ԱՐԱՄԵԱՆ ՏԱՐԵՆԻՑ

1877

ԹՈՒԱԿԱՆԻՆ ՔՐԻՍՏՈՍԻ

ԳԻՆ ՄԷԿ ԵՆՈՒ ԹՈՒՂԹ

ՊԱՐՈՒՆԱԿՈՒԹԻՒՆՔ

Օրացոյց և գուշակութիւնք օդոյ։— Տօմարական գիտելիք։— Նոր ցանկ նշանաւոր անցքից։— Վիճակագիր Թուրքիոյ, ցանկ Օսմանեան Սուլթանաց, կայսերական դերդաստան և Արքայազունք, Նախարարք և զանազան Վարչութիւնք, զօրութիւնք ծովային և ցամաքային, Իշխանութիւնք, Վարչութիւնք Հայոց, Յունաց, Պուլղարաց և Հրէից, Վարչութիւն հեռագրութեան և թղթատարութիւն Թուրքիոյ և յուցակք գնոց ապրանքաց տեղիս։— Վիճակագիր Տէրութեանց։— Միացեալ Նահանգք.— Մէքսիկա։— Պրազիլիա։— Անգղիա։— Աւստրիա։— Բրուսիա Պավիէրա, Սաքսոնիա, Վիրթէնպէրկ։— Զուիցերա։— Իտալիա — Հելլատա, — Հոլանտա։— Շուէտ–Նորվէկիա։— Զինաստան — Պարսկաստան։— Պէլճիքա.— Պիրման։— Ռուսիա։— Սիամ.— Սպանիա.— Տանիմարգա։— Փորթուկալ։— Ֆռանսա։— Ժամանակագրութիւն քաղաքական։— Ալլ և այլք։— Երթեւեկք Արտաքին և Ներքին շոգենաւային զանազան ընկերութեանց,— Թանուեղուած։— Ծանուցմունք 100 ֆրանգ պարգեւով մի իսկ լուսկ։

Երեք հարիւր երեսէ բաղկացեալ այս տարեցոյցը՝ մինչեւ հիմա հրատարակուածներէն աւելի ճոխ և կարեւոր ու մանրամասն տեղեկութիւններ պարունակելուն ամենուն ընթերցման արժանի է։

ԱՐՏՕՆԱՑԷՐ
Կ. Ս. ԻԻԹԻԻՃԵԱՆ

ԽՄԲԱԳԻՐ ՅՆՕՐԷՆ
Մ. ԳԱՖԱՄԱՃԵԱՆ

ՏՊԱՐՐՍԻԹԻՒՆ Ց. ԳԱՖԱՖԵԱՆ
ՄԱՀՄՈՒՏ ԲԱՇԱ ՓԻՐՓԻՐԻ ԽԱՆ Ն. 26